

Ք Ա Ղ Յ Կ Ե Դ Ի Մ Ը Ս Ի Ն

Քաղցկեղը՝ տեսակ մը ուռ է, որ երևան կուզայ ընդհանրապէս տարեց (40-էն յետոյ) անձերուն քով, մարմնին արտաքին կամ ներքին որևէ մէկ մասին վրայ: Եւսոյ կը տարածուի, ճիւղաւորում-ներ կ'արձակէ (cancer: Խէչափառի ոստիերուն նման), կը փորէ (լոլիբրդ), կը յօշոտէ ու կը փնացնէ (ուտին) հիւսկէնները ու վերջ ի վերջոյ հիւանդը կը մեռցնէ: Սակայն ամէն ուռ քաղցկեղ չէ. կան անդնաս ուռեր, որոնք պատեանի մը մէջ պարփակուած են, չեն տարածուիր և մահ չեն պատճառեր:

Քաղցկեղի (քանսէո) պատճառը դեռ գտնուած չէ: Դրեթէ հաստատուած է որ 1) Քաղցկեղը վարակիչ հիւանդութիւն չէ. թերեւս միքրոպազին ալ չէ, 2) քաղցկեղը ժառանգական չէ, այսինքն թէ անոնք որոնց ընտանիքին մէջ (ծնողք, ազգականներ) քաղցկեղ ունեցողներ եղած են, անպատճառ ենթակայ չեն քաղցկեղ ունենալու, թէպէտ ուրիշներէ աւելի տրամադրիք ըլլալ կը թուին:

Ստորև կուտանք քաղցկեղին դէմ Անդլօ-Ամերիկեան և Ֆրանսական Ընկերակցութեան մէկ թուուցիկին թարգմանութիւնը:

ՔԱՂՅԿԵՂԸ ԲՈՒԺԵԼԻ Է ԵԹԷ ՍԿՉԲԻ ՇՐՋԱՆԻՆ ԵՐԵՒԱՆՆ ՀԱՆՈՒԻ ԵՒ ԴԱՐՄԱՆՈՒԻ:

Մորթի քաղցկեղը 80% կը բուժուի

Արգանդի , , 60-70% , ,

Ստինքի , , 35-45% , ,

Ստամոքսի , , 30-35% , ,

Ուշադիր եղէք անոր սկզբնական նշաններուն և զգուշացէք, երբ նշմարէք, մանաւանդ 40-էն վերջ,

— Ստինքի անցաւ կարծրութիւններու կամ ուռեր.

— Լեզուի կամ շրբութեններու երկարաւու խոցեր.

— Մորթի փոքր ուռեր որոնի կը մեծնան և վէրք կը քանան. ներուն կամ չորցած ու պահածոյ ուստելիքներով սնանողներուն:

— Ստամոքսի տևական խանգարումներ, մանաւանդ երբ անոնց վրայ աւելնայ նիհարութիւն.

— Քառասուն տարեկանէն վերջ, աղիքներու ծուլութիւն պնդութիւն նկան.

— Արգանդի անբնական արիւնահոսութիւն:

ԱՆՄԻԶԱԳԻՍ ԴԻՄԵՑԼԻՔ ԶԵՐ ԲԺԻՇԿԻՆ: ՄԱՆՐԱՄԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԵՆ- ԲԱՐԿՈՒՆՑՔ: ՄԻ ՍՊԱՍԼԻՔ ԵՒ ԶԱՆԱԳԱՆ ԴԵՆԵՐ ԱԲՆԵԼՈՎ ՃԱՄԱՆԱԿ ՄԻ ԿՈՐՄՆՑՆԷՔ: ՅԵՏՈՉ ՇԱՏ ՈՒՇ Կ'ԷԼԼԱՅ: